



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՑ ՖՐԱՆՍԱՅԻ ԹԵՄ

DIOCÈSE DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE DE FRANCE

Միրելի Հաւատացեալ Ժողովուրդ
Միրելի Բարեկամներ

Ձմռան դաժան ցուրտ օրերը մեզ վրայ են, որոնք աւելի պիտի վատթարացնեն Ագրպէյճանի կողմէ սանձազերծուած այս տարուայ Սեպտեմբեր 27-էն սկսած պատերազմի հետեւանքով Հայաստանի եւ Արցախի մէջ ստեղծուած ընկերային եւ տնտեսական ծանր կացութիւնը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ կազմուած է «Արցախի աջակցութեան յանձնախումբ»՝ մասնակցութեամբ տարբեր թեմերու առաջնորդներու եւ Հայ Եկեղեցոյ նուիրեալ աշխարհական ղեկավարներու, պատերազմի հետեւանքով ահաւոր վիճակը մեղմելու եւ մեր ժողովուրդի զաւակներուն հոգեւոր ու նիւթական աջակցութիւն բերելու նպատակով:

Յանձնախումբի առաքելութիւնն է Արցախի պատերազմի հետեւանքով ընկերային ծանր կացութեան մէջ յայտնուած արցախահայութեան համար մարդասիրական օժանդակութիւն իրականացնել:

1. Անմիջական օժանդակութիւն,
 - Ձմռան չորս ամիսներուն (Ռեկտեմբեր-Մարտ) անմիջական օժանդակութիւն ապահովել (բնակարանային, սնունդի եւ կենցաղային տարբեր կարիքներ) կարիքաւոր անձերու կամ ընտանիքներու:
 - Հովուական հոգատարութիւն՝ վիրաւոր զինուորներու եւ անոնց ընտանիքներու համար:
2. Զարգացման ծրագրեր: Այս պահին անմիջապէս իրականացուելիք ծրագիրը տեղահանուած ընտանիքներուն ցուցաբերուելիք սնունդի, մաքրութեան (hygiene) պարագաներու տրամադրման եւ կենցաղային (énergère) ծախսերու աջակցութիւնն է՝ հետեւեալ հաշուարկի համաձայն՝

Ընտանիքի Կազմը	Մէկ Ամսուայ Ծախսը (€)	Չորս Ամսուայ Ծախսը (€)
1 հոգի (միայնակ)	105	420
2-4 հոգի	185	740
5 եւ աւելի հոգի	245	980

Աջակցութեան ծրագիրը պիտի կազմակերպուի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Ընկերային Ծառայութեան Գրասենեակ»ի կողմէ՝ համապատասխան գումարներն ստանալէ անմիջապէս ետքը: Մեր եղբայրներն ու քոյրերը Հայաստանի թեմերուն մէջ գործուն մասնակցութիւն պիտի ունենան տեղահանուած եւ Հայաստանի մէջ ապաստանած ընտանիքներուն սնունդի փաթեթները փոխանցելու աշխատանքին մէջ: Արցախի աջակցութեան յանձնախումբը պարբերաբար աշխատանքային եւ


Ֆինանսական հաշուետուութիւն պիտի ներկայացնէ կատարուած աշխատանքներու վերաբերեալ:

Այստեղ՝ մեր Թեմին մէջ, յանձնախումբ մը նշանակուած է՝ ատենապետութեամբ Հոգեշնորհ Գրիգոր Վրդ. Խաչատրեանին՝ կազմակերպելու և համակարգելու համար այս աջակցութեան ծրագրի իրականացումը և ծառայելու որպէս կապող օղակը մեր Թեմի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեւ: Թեմիս հոգեւոր հայրերուն եւ Ծխական Խորհուրդի անդամներուն եւ ղեկաւարներուն դիմած ենք որպէս զի իւրաքանչիւր ծուխի մէջ կազմակերպուի յանձնախումբ մը այս նպատակի համար: Իւրաքանչիւր Ծուխ իր յանձնաժողովը պիտի ունենայ՝ այս մարդասիրական ծրագիրը համակարգելու եւ յաջողցնելու համար ամբողջ Ֆրանսայի տարածքին մէջ:

Ծխական յանձնախումբերը կ'իրականացնեն Արցախի օժանդակութեան ծրագիրը տեղական հիմքերով եւ կը համակարգեն Թեմի կեդրոնական յանձնախումբի միջոցով օժանդակութեան փոխանցումը, որ իր հերթին կը փոխանցէ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

«Երանի՛ անոր, որ աղքատին հոգ կը տանի: Նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ զանիկա:»
(Մաղմուս 41:1)

Օրհնութեամբ՝



Վահան Եպիսկոպոս

Փարիզ՝ 16 Դեկտեմբեր 2020